

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

**Ադրբեջանի Հանրապետության կատարած իրավախախտումները ԼՂՀ-ում և
միջազգային կառույցներին դիմելու հնարավորությունները**

ԶԵԿՈՒՑՑ

ԵՐԵՎԱՆ

Մայիս, 2016թ.

© Իրավաբանների հայկական ասոցիացիա, 2016 թ. Նյութերի օգտագործման դեպքում
հղումը պարտադիր է:

Մույն զեկույցը պատրաստվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի
փորձագիտական խումբը՝ հետևյալ կազմով.

1. Կարեն Զադոյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, փաստաբան

2. Արտակ Սարիբեկյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի գործադիր տնօրեն

3. Մարիամ Զադոյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի անդամ, փաստաբան

4. Սյուզաննա Սողոմոնյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի խորհրդի անդամ, փաստաբան

5. Մարատ Ատովյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի խորհրդի անդամ, փաստաբան

6. Արփինե Եղիկյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի խորհրդի անդամ, փաստաբան

7. Գևորգ Թոսունյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից գործարկվող Իրավաբան.net
անկախ մասնագիտական լրատվական կայքի լրագրող

8. Ալեքսանդր Սարգսյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից գործարկվող Իրավաբան.net
անկախ մասնագիտական լրատվական կայքի օպերատոր

*Զեկույցը հաստատվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի խորհրդի
կողմից՝ 2016 թվականի մայիսի 24-ին:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ.....	7
1.1 Ուժի չկիրառման արգելքի և վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքների խախտում.....	7
1.2 Ազգերի ինքնորոշման սկզբունքի խախտում	8
1.3 Էթնիկական ծագմամբ պայմանավորված խտրական վերաբերմունքի, ատելության և բռնության դրդման արգելքի խախտում	9
1.4 Եռակողմ (ԼՂՀ, Ադրբեջան, ՀՀ) համաձայնագրերի խախտում	12
2. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ.....	13
2.1 Խաղաղ բնակչության և զինվորականների միջև տարբերակման սկզբունքի խախտում	13
2.2 Քաղաքացիական և զինվորական օբյեկտների տարբերակման սկզբունքի խախտում	16
2.3 Սանիտարատրանսպորտային միջոցների պաշտպանության սկզբունքի խախտում	17
2.4 Երեխաների իրավունքների խախտումներ	18
2.5 Ռազմագերիների/զինված ընդհարումների զոհերի հետ վարվելակերպի կանոններ	19
2.6 Մարդկային վահանների օգտագործում.....	20
3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	23
3.1 Մարդու իրավունքների եվրոպական դատարան	23
3.2 Միջազգային քրեական դատարան	26
3.3 Արդարադատության միջազգային դատարան.....	31
3.4 Միավորված ազգերի Ad-hoc քրեական և հիբրիդային դատարաններ Ad-hoc քրեական դատարաններ.....	33
4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	36

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԼՂՀ - Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ԱՀ – Ադրբեջանի Հանրապետություն

ՄԻԵԿ - Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա

ՄԻԵԴ - Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄՔԴ – Միջազգային քրեական դատարան

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ԵԱՀԿ - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանների հայկական ասոցիացիան խստորեն դատապարտում է 2016թ. ապրիլի 2-ից 5-ը Արցախի հետ շփման ողջ երկայնքով Ադրբեջանի ձեռնարկած ռազմական գործողությունները, ինչպես նաև՝ ՀՀ-ի Տավուշի և Գեղարքունիքի մարզերի բնակավայրերի ռմբակոծությունները, որոնք, իրենց բնույթով, խախտում են միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքները: Ադրբեջանը չի հետևում *jus in bello-ի* կանոններին:

Ադրբեջանը ոտնահարել է Ժնևյան կոնվենցիաների, ՄԱԿ-ի Կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի, ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի և այլ նորմեր: Հարկ է նշել, որ Ադրբեջանը հանդիսանում է վերը թվարկված բոլոր միջազգային փաստաթղթերի մասնակից պետություն:

Սույն աշխատության մեջ քննարկվել են Ադրբեջանի կողմից իրականացված միջազգայինորեն ճանաչված մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքների խախտումները, տարածաշրջանային և միջազգային դատարաններ դիմելու հնարավորությունները և տրվել են համապատասխան առաջարկություններ:

ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զեկույցը կազմվել է՝ համատեղելով հետևյալ մեթոդները.

1. Հետազոտություն. Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից գործարկվող Իրավաբան.net անկախ լրատվական կայքի անձնակազմը՝ Ասոցիացիայի գործադիր տնօրենի նախագահությամբ մեկնել են ԼՂՀ փաստահավաք գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Ուսումնասիրություն.
 - Ա. Ուսումնասիրվել են միջազգային իրավական փաստաթղթեր՝ Ժնևյան կոնվենցիաներ, այլ կոնվենցիաներ և ՄԻԵԴ-ի, Միջազգային քրեական դատարանի և Արդարադատության միջազգային դատարանի նախադեպային իրավունքը:
 - Բ. Ուսումնասիրվել են զանգվածային լրատվամիջոցներում՝ Iravaban.net և այլ կայքերում, այդ թվում՝ միջազգային, տեղ գտած հրապարակումները խնդրո առարկայի վերաբերյալ:
3. Վերլուծություն.

Համադրվել են առկա փաստերն ու միջազգային իրավական փաստաթղթերը՝ վեր հանելով դրանց խախտումները Ադրբեջանի կողմից:
4. Առաջարկությունների ներկայացում.

Վերլուծության հիման վրա ներկայացվում են առաջարկություններ միջազգային համապատասխան իրավական կառույցներին դիմելու վերաբերյալ:

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

1.1 Ուժի չկիրառման արգելքի և վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքների խախտում

Ուժի չկիրառման արգելքը առաջին անգամ որպես միջազգային իրավունքի սկզբունք ամրագրվեց ՄԱԿ-ի կանոնադրությունում¹: Այն նաև արտացոլված է ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի² երկրորդ կետում, որը Ադրբեյջանը վավերացրել է 1992թ. հուլիսի 8-ին³: Այսպես, ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելուց ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ Միավորված ազգերի նպատակների հետ անհամատեղելի ցանկացած այլ ձևով:*

Վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը կարգավորվում է ՄԱԿ-ի Կանոնադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ *բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը կարգավորում են խաղաղ միջոցներով, այնպես, որ վտանգի չենթարկվեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը:*

Ուժ չգործադրելու սկզբունքը նախ և առաջ նախատեսում է ագրեսիվ պատերազմների արգելումը: 1974 թվականին ընդունված ագրեսիայի բնորոշման համաձայն պետության կողմից առաջինը զինված ուժ կիրառելը կարող է որակվել որպես ագրեսիվ պատերազմ, որը հանդիսանում է միջազգային հանցագործություն և առաջ է բերում պետության միջազգային-իրավական պատասխանատվություն և միջազգային քրեական պատասխանատվություն մեղավոր անհատների համար: Սկսած 70-ական թթ.-ից՝ այս սկզբունքի նորմատիվ բովանդակության մեջ հատկապես նշվում է պետությունների պարտականությունը ձեռնպահ մնալ այլ պետության սահմանները

¹ ՄԱԿ-ի կանոնադրություն, որն ուժի մեջ է մտել 1992թ. մարտ 2-ից (Գլխավոր ասամբլեայի 46/227 բանաձև): http://www.un.org/ua/charter/UN%20Charter_eng.pdf

² Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդատուների եզրափակիչ ակտ, Հելսինկի 1975թ., <http://www.osce.org/hy/mc/39507?download=true>

³ https://en.wikipedia.org/wiki/Organization_for_Security_and_Co-operation_in_Europe

խախտելու մտադրությամբ կամ որպես պետական սահմաններին վերաբերող տարածքային վեճերը և խնդիրները լուծելու միջոց ուժի սպառնալիք գործադրելուց:⁴

Շեխինկյան եզրափակիչ ակտը նախատեսում է, որ *մասնակից երկրները պայմանավորվում են հարգել 10 սկզբունքները և գործել դրանց համաձայն*: Վերոնշյալ ակտում ներառված երկրորդ սկզբունքը հռչակում է *ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելը, իսկ հինգերորդը՝ վեճերի խաղաղ կարգավորումը*: Ադրբեջանը, ստորագրելով փաստաթուղթը, պարտավորվել է հարգել և պաշտպանել վերոնշյալ 10 սկզբունքները: Սակայն Ադրբեջանը տարիներ ի վեր փորձում է Արցախի կարգավիճակի հետ կապված վեճը լուծել բացառապես ռազմական ճանապարհով: 2016թ. ապրիլի 2-ից 5-ը, Ադրբեջանի կողմից սանձազերծած ռազմական գործողությունները, որոնք հանգեցրել են բազմաթիվ զոհերի ինչպես զինվորականների, այնպես էլ խաղաղ բնակիչների շրջանում, և պատճառված ավերածությունները, դրա վառ վկայությունն են:

1.2 Ազգերի ինքնորոշման սկզբունքի խախտում

Համաձայն միջազգային իրավունքի հիմնարար նորմերի՝ տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող հակադրվել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին: ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածը թվարկում է այդ կազմակերպության նպատակները, այդ թվում՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքը:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի⁵, որը Ադրբեջանը վավերացրել է 1991թ.-ի օգոստոսի 13-ին, 1-ին հոդվածը սահմանում է, որ. *«Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը*:

3. *Սույն դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում՝ նրանք, ովքեր պատասխանատվություն են կրում ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ*

⁴<https://ysuinterlaw.wordpress.com/2010/12/03/%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%AB-%D5%BD%D5%AF%D5%A6%D5%A2%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80/>

⁵ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, <http://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>

տարածքների կառավարման համար, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան պետք է խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը»:

Հատկանշական է ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի⁶ 8-րդ սկզբունքի ձևակերպումը. «բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ և ինչպես նրանք ցանկանում են, որոշել իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, և սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը», ինչպես նաև 13 «մասնակից պետությունները [...] ընդգծում են այդ սկզբունքի խախտման ցանկացած ձևը վերացնելու կարևորությունը»:

Արդարադատության միջազգային դատարանը *Կոսովո* Խորհրդատվական կարծիքում⁷ նշել է, որ անկախության միակողմանի հռչակագիրը չի ոտնահարում միջազգային իրավունքը:

Ի հակառակ նշվածի, Ադրբեջանը փորձում է արյան մեջ խեղդել արցախցիների ազատ ինքնորոշման իրավունքը:

1.3 Էթնիկական ծագմամբ պայմանավորված խտրական վերաբերմունքի, ատելության և բռնության դրդման արգելքի խախտում

Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությունը անընդմեջ երիտասարդությանը դաստիարակում է հայերի հանդեպ ատելության և անհանդուրժողականության մթնոլորտում: Դրա վառ ապացույցներից է, օրինակ, ազգությամբ հայ Գ. Մարգարյանին քնած ժամանակ կացնահարելով սպանելու համար ազատազրկման դատապարտված Ռ. Սաֆարովին Ադրբեջան վերադարձնելուց հետո ազատություն տալն ու հերոսի կոչում շնորհելը, Քյարամ Սլոյանին գլխատած զինվորականին պարգևատրելը, և այլն, որոնք ավելի մանրամասն կքննարկվեն ստորև:

⁶ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտ, Հելսինկի 1975թ., <http://www.osce.org/hy/mc/39507?download=true>

⁷ *Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo (Request for Advisory Opinion)*, ICJ, 22 July 2010

Ադրբեջանի կողմից իրականացված նման արարքները խախտում են Միջազգային իրավունքի սկզբունքները, որոնք արտացոլված են 1945թ. ՄԱԿ-ի Կանոնադրությունում, 1965թ. «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայում, 1966թ. «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» դաշնագրում, 1970թ. «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում, որը վերաբերում է պետությունների համագործակցությանը և նրանց միջև բարեկամական հարաբերություններին», 1975թ. ԵԱՀԿ Հելսինկյան Եզրափակիչ ակտում և այլ միջազգային փաստաթղթերում:

Վերոնշյալ փաստաթղթերից անկյունաքարային նշանակություն ունի «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան⁸, որը Ադրբեջանը վավերացրել է 1996թ.-ին, մասնավորապես վերջինիս 4-րդ հոդվածը, որը նախատեսում է՝

Մասնակից պետությունները դատապարտում են ցանկացած քարոզչություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն. նրանք պարտավորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խտրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքների ու սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում շարադրված իրավունքներին համապատասխան, այլ միջոցների թվում՝

(ա) օրենքով պատժելի հանցանք են համարում ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը, ինչպես նաև ռասիստական գործունեությանն օգնություն տրամադրելը, ներառյալ՝ նման գործունեության ֆինանսավորումը,

⁸ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, 1965թ..
https://treaties.un.org/doc/Treaties/1969/03/19690312%2008-49%20AM/Ch_IV_2p.pdf

(բ) հակաօրինական են հայտարարում և արգելում են այն կազմակերպությունները, ինչպես նաև կազմակերպված ու ցանկացած այլ քարոզչական գործունեություն, որոնք խրախուսում ու հրահրում են ռասայական խտրականություն, և մասնակցությունը նման կազմակերպություններին կամ գործունեությանը համարում են օրենքով պատժելի հանցագործություն,

(գ) պետական իշխանության ազգային կամ տեղական մարմիններին կամ պետական հաստատություններին չեն թույլատրում խրախուսել կամ հրահրել ռասայական խտրականություն:

«Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով:*

Ադրբեջանը ոչ միայն օրենքով պատժելի արարք չի համարում հայերի նկատմամբ էթնիկական ատելության վրա հիմնված սպանությունների և այլ բռնությունների գործադրումը, այլ նման արարքները խրախուսում է, իսկ կատարողներին՝ հերոսացնում: Բարձրաստիճան պաշտոնատար, ինչպես նաև հանրային այլ անձինք իրականացնում են ատելություն և բռնություն քարոզող հետևողական գործունեություն, ինչպես նաև ատելությունը քարոզվում է զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում:

Ինչպես արդեն նշել էինք, այդպիսի դաստիարակության արդյունք և ապացույց է ՆԱՏՕ-ի շրջանակներում Բուդապեշտում կազմակերպված դասընթացներին ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովի կողմից հայ սպային քնած ժամանակ կացնի բազմաթիվ հարվածներով դաժանաբար սպանելը: Ռամիլ Սաֆարովը հունգարական դատարանի վճռով դատապարտվում է ցմահ ազատազրկման, այնուհետև արտահանվում է Ադրբեջանին, որտեղ օդանավակայանում արդեն՝ վերջինս ազատ է արձակվում և արժանանում է արտահերթ զինվորական կոչման՝ ստանալով միանվագ աշխատավարձ հունգարական բանտում անցկացրած տարիների համար⁹: Ադրբեջանի այդ արարքը արժանացավ ոչ միայն Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարության, այլև ԵԱՀԿ մասնակից

⁹ Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Շավարշ Քոչարյան, 2013թ.

երկրների ճնշող մեծամասնության, ԵՄ-ի¹⁰, ԵԽ-ի, ՆԱՏՕ-ի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների սուր քննադատությանը¹¹:

Ադրբեջանի կողմից հայկական ծագում ունեցող մարդկանց նկատմամբ ատելության և բռնության դրդելու մասին են վկայում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների օբյեկտիվ գնահատականները: Մասնավորապես Ռասայական խտրականությունների վերացման կոմիտեն, որը կոնվենցիոն վերահսկողության առաջին մարմինն է և կոչված է հետևելու «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի իրականացմանը, հայտնել է իր մտահոգությունը:¹² ՀՀ-ի նկատմամբ ռասայական խտրականությունը հաստատված է նաև Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ կոմիտեի կողմից¹³:

Այսպիսով, Ադրբեջանական իշխանությունները ձախողվել են իրականացնել մարդու իրավունքների վերաբերյալ վերոնշյալ միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունները:

1.4 Եռակողմ (ԼՂՀ, ԱՀ, ՀՀ) համաձայնագրերի խախտում

Ադրբեջանի Հանրապետությունը պարբերաբար խախտում է իր իսկ կողմից ստորագրած եռակողմ (ԼՂՀ, ԱՀ, ՀՀ) համաձայնագրերը հրադադարի ռեժիմի (1994թ. մայիս) և հրադադարի ռեժիմի ամրապնդման (1995թ. փետրվար) մասին:

¹⁰ Մանրամասներն այստեղ՝ <http://iravaban.net/10883.html>

¹¹ Տե՛ս <http://karabakhfacts.com/tag/ramil-safarov-case/>

¹² Concluding observations of the Committee on the Elimination of Racial Discrimination Concluding Observations of the Committee on the Elimination of Racial Discrimination: Azerbaijan, CERD/C/AZE/CO/4. 14 Apr. 2005, para. 10.

¹³ Report on Azerbaijan, adopted on 28 June 2002, European Commission against Racism and Intolerance, para. 51.

2. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի 4 կոնվենցիաները և նրանց լրացուցիչ արձանագրությունները միջազգային մարդասիրական իրավունքի կարևորագույն աղբյուրներից են: ԱՀ-ն պարբերաբար կոպտորեն խախտել է Ժնևյան կոնվենցիաների նորմերը և այլ մարդասիրական կանոններ:

2.1 Խաղաղ բնակչության և զինվորականների միջև տարբերակման սկզբունքի խախտում

«Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի Կոնվենցիաներին կից Ժնևի 1977թ.-ի օգոստոսի 12-ի կոնվենցիայի 1-ին Լրացուցիչ Արձանագրության (Արձանագրություն 1) 1-ին հոդվածի 3-րդ և 4-րդ մասերից բխում է, որ վերջինս *կիրառվում է նաև այն զինված ընդհարումների ժամանակ, որոնցում ժողովուրդները պայքար են մղում (...)*¹⁴ որպես իրականացում ինքնորոշման իրենց իրավունքի:

Վերոնշյալ արձանագրության 51-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

Քաղաքացիական բնակչությունը, որպես այդպիսին, ինչպես նաև քաղաքացիական առանձին անձինք չպետք է հարձակումների օբյեկտ հանդիսանան: Արգելվում են բռնության գործողությունները կամ բռնության սպառնալիքները, որոնց հիմնական նպատակն է ահաբեկել քաղաքացիական բնակչությանը:

Ոչ ընտրողական բնույթի հարձակումներն արգելվում են: Ոչ ընտրողական բնույթի հարձակումների թվին են պատկանում.

ա) այն հարձակումները, որոնք ուղղված չեն ռազմական կոնկրետ օբյեկտների դեմ,

բ) այն հարձակումները, որոնց ժամանակ կիրառվում են ռազմական գործողությունների վարման մեթոդներ կամ միջոցներ, որոնք չեն կարող ուղղված լինել ռազմական կոնկրետ օբյեկտների դեմ (...):

Հարկ է նշել, որ ՀՀ-ը վավերացրել է վերոնշյալ Լրացուցիչ արձանագրությունը 1993թ.-ին, իսկ Ադրբեյջանը՝ ոչ¹⁴:

¹⁴ https://en.wikipedia.org/wiki/List_of_parties_to_the_Geneva_Conventions

Ոչ ընտրողական բնույթի զենքի օգտագործումը նաև արգելվում է Հաագայի 2-րդ՝ 1899թ.-ի «Պատերազմի օրենքների ու սովորույթների մասին» միջազգային կոնվենցիայով: Սակայն ոչ ՀՀ-ն, ոչ էլ Ադրբեջանը չեն վավերացրել վերոնշյալ կոնվենցիան¹⁵:

Խաղաղ բնակչությանը և զինվորականներին տարբերակելու պարտավորությունների խախտումները՝ որպես պատերազմական հանցագործություններ, տրված են նաև Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ա ենթակետով և 2002թ. «Հանցագործության տարրեր» ակտով¹⁶: «Հանցագործության տարրեր» ակտը Միջազգային քրեական դատարանին օգնում է Կանոնադրության 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների մեկնաբանման և կիրառման գործում, որոնցում համապատասխանաբար սահմանված են ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հանցակազմերը:

Թեև Ադրբեջանը չի վավերացրել Ժնևյան կոնվենցիաների լրացուցիչ արձանագրությունները, ինչպես նաև Միջազգային քրեական դատարանի Կանոնադրությունը, դա վերջինիս չի ազատում խաղաղ բնակչության և զինվորականների միջև տարբերակելու սկզբունքի խախտման դեպքերի համար պատասխանատվությունից (որոնք կներկայացվեն ստորև), քանի որ վերոնշյալ սկզբունքը համարվում է սովորութային նորմ երկրների պրակտիկայի կողմից: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի ուսումնասիրությունում¹⁷ ևս ամրագրված է վերոնշյալ սկզբունքը՝ որպես Կանոն համար 1-ին և 11-րդ:

Խաղաղ բնակչության և զինվորականների միջև չտարբերակելու արգելքը նախատեսված է նաև Արդարադատության միջազգային դատարանի կողմից տրված «Ատոմային զենքեր» Խորհրդատվական Կարծիքում¹⁸:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր մարդ ունի կյանքի, ազատության, անձի անձեռնմխելիության իրավունք,*

¹⁵ https://en.wikipedia.org/wiki/List_of_parties_to_the_Hague_Conventions_of_1899_and_1907

¹⁶ Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, https://www.icc-cpi.int/nr/rdonlyres/ea9aeff7-5752-4f84-be94-0a655eb30e16/0/rome_statute_english.pdf

¹⁷ Study on customary international humanitarian law conducted by the International Committee of the Red Cross (ICRC), Cambridge University Press, 2009, Volume II, Chapter 1, Section A.;

¹⁸ *Legality of the Threat or Use of Nuclear Weapons*, ICJ 8 July 1996,



իսկ 5-րդ հողվածը սահմանում է, որ *ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի:*

«Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության

պաշտպանության մասին» 12.08.1949թ.-ի Ժնևի 4-րդ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ (...) սույն *Կոնվենցիան կկիրառվի հայտարարված պատերազմի և ամեն մի այլ զինված կոնֆլիկտի դեպքում, որ ծագում է երկու կամ մի քանի Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև, անգամ այն դեպքում, եթե դրանցից մեկն ու մեկը չի ընդունում պատերազմական վիճակը: Եթե կոնֆլիկտի մեջ մտնող տերություններից մեկը չի հանդիսանում սույն կոնվենցիայի մասնակից, այնուամենայնիվ, դրա մասնակից տերությունները իրենց փոխհարաբերություններում մնում են Կոնվենցիայով կապված:*

Այսինքն, եթե նույնիսկ ԼՂՀ-ը չի հանդիսանում վերոնշյալ կոնվենցիայի մասնակից պետություն, այնուամենայնիվ Ադրբեյջանը պարտավոր է պահել կոնվենցիայի նորմերը:

Վերոնշյալ կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ *վիրավորները և հիվանդները (...) կօգտվեն հատուկ հովանավորությունից և պաշտպանությունից: Որքան հնարավորություն են տալիս ռազմական պահանջները, կոնֆլիկտի մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ կնպաստի սպանվածներին և վիրավորներին փնտրելու, (...) և լուրջ վտանգի ենթարկվող այլ անձանց օգնություն ցույց տալու, ինչպես նաև կողոպուտից և անվայել վերաբերմունքից նրանց պատնեշելու միջոցառումներին:*

Ադրբեյջանը ումբակոծել է ԼՂՀ-ի Մարտակերտ¹⁹ և Մարտունի քաղաքները, Թալիշ և Մատաղիս գյուղերը, Քարվաճառը, այլ բնակավայրեր, որի արդյունքում զոհվել և վիրավորվել են խաղաղ բնակիչներ, այդ թվում նաև՝ երեխաներ:

¹⁹ Լուսանկարները կարելի է տեսնել այստեղ՝ <http://iravaban.net/122823.html#ad-image-5>

Այսպես, Քարվաճառում վիրավորվել է տասնվեցամյա Կամո Օհանյանը, Մարտունու պաշտպանական ուղղությամբ ՄՄ-21 («Գրադ») կայանքից իրականացված հրթիռահրետակոծության հետևանքով իրենց դպրոցի մոտ սպանվել է 2004թ. ծնված Վաղինակ Գրիգորյանը²⁰, ևս երկու երեխա՝ 2 տարեկան Վարդան Անդրեասյանը և տասնմեկամյա



Գևորգ Գրիգորյանը, վիրավորվել են²¹: Վերջինս սպանված Վաղինակ Գրիգորյանի հարազատ եղբայրն է:

Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի տարեցներ Վալերա և Ռազմելա Խալափյանները իրենց տանը գնդակահարվել են Ադրբեջանի զինծառայողների կողմից, որոնք ծերերին դաժանաբար սպանելուց հետո կտրել են նրանց ականջները²²:

Մարտակերտի ճանապարհին Ադրբեջանի զինված ուժերը ուրբակոծել են Սիսիանից ժամանած կամավորների ավտոբուսը, որի արդյունքում զոհվել են վեց խաղաղ բնակիչներ, այդ թվում նաև՝ գյուղապետեր²³:

2.2 Քաղաքացիական և զինվորական օբյեկտների տարբերակման սկզբունքի խախտում

Արձանագրություն 1-ի 52-րդ հոդվածը ամրագրում է քաղաքացիական օբյեկտների ընդհանուր պաշտպանությունը: Վերջինիս համաձայն՝ *քաղաքացիական օբյեկտները չպետք է հանդիսանան հարձակման կամ փոխձնշումների օբյեկտ: Քաղաքացիական օբյեկտներ են հանդիսանում բոլոր այն օբյեկտները, որոնք չեն հանդիսանում ռազմական օբյեկտներ (...): Հարձակումները պետք է խստագույնս սահմանափակվեն ռազմական օբյեկտներով (...): Կասկած առաջանալու դեպքում, այն օբյեկտը, որը սովորաբար*

²⁰ Պաշտոնական տեղեկատվությունն այստեղ՝ <http://iravaban.net/121810.html>

²¹ Մանրամասները՝ <http://iravaban.net/123127.html>

²² Պաշտոնական հաղորդագրությունն այստեղ՝ <http://iravaban.net/122896.html>

²³ Մանրամասներն այստեղ՝ <http://iravaban.net/122332.html>

նախատեսված է քաղաքացիական նպատակների համար, օրինակ, պաշտամունքի վայր, բնակելի տուն կամ այլ բնակելի շինություններ, կամ դպրոց, ենթադրվում է, որ այն չի օգտագործվում ռազմական գործողություններին արդյունավետ աջակցելու համար:

Քաղաքացիական և ռազմական օբյեկտների միջև տարբերակման սկզբունքի խախտումները՝ որպես պատերազմական հանցագործություններ, տրված են նաև Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և ենթակետով և 2002թ. «Հանցագործության տարրեր» ակտով²⁴:

Վերոնշյալ սկզբունքը համարվում է սովորության նորմ երկրների պրակտիկայի կողմից: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի սովորության միջազգային մարդասիրական իրավունքի ուսումնասիրությունում²⁵ ևս ամրագրված է վերոնշյալ սկզբունքը՝ որպես Կանոն համար 23:

Սարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք իրավունք ունի ունեցվածք ունենալու ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ: Ոչ ոք կամայականորեն չպետք է զրկվի իր ունեցվածքից:*

Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ում իրականացված ուրակոծությունների արդյունքում ավերվել են բազմաթիվ բնակելի տներ, հասարակական օբյեկտներ, այդ թվում՝ դպրոցներ, հիվանդանոցներ²⁶:



2.3 Սանիտարատրանսպորտային միջոցների պաշտպանության սկզբունքի խախտում

²⁴ Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, https://www.icc-cpi.int/nr/rdonlyres/ea9aeff7-5752-4f84-be94-0a655eb30e16/0/rome_statute_english.pdf

²⁵ Study on customary international humanitarian law conducted by the International Committee of the Red Cross (ICRC), Cambridge University Press, 2009, Volume II, Chapter 1, Section A.:

²⁶ Բոլոր լուսանկարներն այստեղ՝ <http://iravaban.net/122823.html>

Արձանագրության 1-ի որոշ դրույթներ վերաբերում են սանիտարական մեքենաների և բժշկական հաստատությունների պաշտպանությանը:

Այսպես, 12-րդ հոդվածի համաձայն՝ *բժշկական կազմավորումները մշտապես օգտվում են հարգանքից և պաշտպանությունից և չեն կարող հարձակման օբյեկտ լինել:*

21-րդ հոդվածի համաձայն *ցամաքային սանիտարատրանսպորտային միջոցներն օգտվում են նույնպիսի հարգանքից և պաշտպանությունից, ինչպես որ շարժական բժշկական կազմավորումները՝ կոնվենցիաներին և սույն արձանագրությանը համապատասխան:*

Ըստ Արձանագրության 8-րդ հոդվածի է) ենթակետի՝ *«սանիտարատրանսպորտային միջոցներ» նշանակում են ցանկացած փոխադրամիջոցները՝ ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական, մշտական կամ ժամանակավոր, որոնք նախատեսված են բացառապես սանիտարական փոխադրման համար և գտնվում են ընդհարման մեջ գտնվող կողմի իշխանության իրավասու մարմնի հսկողության տակ:*

Վերոնշյալ հոդվածի ը) ենթակետի համաձայն՝ *«ցամաքային սանիտարատրանսպորտային միջոցներ» նշանակում են ցամաքով սանիտարական փոխադրման ցանկացած միջոցները:*

Վերոնշյալ սկզբունքը ևս նախատեսված է Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ա ենթակետով և 2002թ. «Հանցագործության տարրեր» ակտով²⁷:

Ադրբեջանի զորամիավորումները ոչնչացրել են արցախյան շտապ օգնության մեքենան, որը մեկնել էր իրենց կողմից խոցված տանկի անձնակազմին բժշկական օգնություն ցուցաբերելու համար²⁸:

2.4 Երեխաների իրավունքների խախտումներ

Արձանագրության 1-ի համաձայն՝ երեխաները հատուկ պաշտպանության սուբյեկտ են համարվում:

²⁷ Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, https://www.icc-cpi.int/nr/rdonlyres/ea9aeff7-5752-4f84-be94-0a655eb30e16/0/rome_statute_english.pdf

²⁸ Մանրամասներն այստեղ՝ <http://www.azatutyun.am/archive/news/20160407/2031/2031.html?id=27659840>

ՄԱԿ-ի «Երեխաներին իրավունքների մասին» կոնվենցիայի, որը Ադրբեջանը վավերացրել է 1992 թ. օգոստոսի 13-ին²⁹, 38-րդ հոդվածը³⁰ սահմանում է, որ *մասնակից պետությունները պարտավորվում են հարգել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, որոնք կիրառվում են զինված ընդհարումների դեպքում և առնչվում են երեխաներին, և ապահովել դրանց նկատմամբ հարգանքը:*

Ինչպես վերը նշվեց, Քարվաճառում վիրավորվել է տասնվեցամյա Կամո Օհանյանը, Մարտունու պաշտպանական ուղղությամբ ՄՄ-21 («Գրադ») կայանքից իրականացված հրթիռահրետակոծության հետևանքով իրենց դպրոցի մոտ սպանվել է 2004թ. ծնված Վաղինակ Գրիգորյանը, ևս երկու երեխա՝ 2 տարեկան Վարդան Անդրեասյանը և տասնմեկամյա Գևորգ Գրիգորյանը, վիրավորվել են:

2.5 Ռազմագերիների/զինված ընդհարումների զոհերի հետ վարվելակերպի կանոններ

«Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» Ժնևի 3-րդ կոնվենցիայի³¹ 13-րդ հոդվածի համաձայն՝ *ռազմագերիների հետ պետք է մշտապես վարվել մարդասիրաբար: Գերության մեջ պահող տերության ցանկացած ակտը կամ անգործությունը, որոնք հարուցում են նրա իշխանության տակ գտնվող ռազմագերու մահը, կամ ռազմագերու առողջությունը դնում լուրջ սպառնալիքի տակ, արգելվում են և կդիտվեն որպես սույն Կոնվենցիայի լուրջ խախտումներ: Մասնավորապես, ոչ մի ռազմագերի չի կարող ենթարկվել ֆիզիկական խեղման:*

1993 թվականին Ադրբեջանը վավերացրել է Ժնևյան 4 կոնվենցիաները³², իսկ ԼՂՀ-ն՝ միակողմանի ընդունել:

Նման պահանջներ են նաև նախատեսված «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» Ժնևյան 1-ին կոնվենցիայի³³ 50-րդ հոդվածով:

²⁹ https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=IND&mtdsg_no=IV-11&chapter=4&lang=en

³⁰ ՄԱԿ-ի «Երեխաներին իրավունքների մասին» կոնվենցիա https://treaties.un.org/doc/Treaties/1990/09/19900902%2003-14%20AM/Ch_IV_11p.pdf

³¹ «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» Ժնևի 3-րդ կոնվենցիա <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20875>

³² https://en.wikipedia.org/wiki/List_of_parties_to_the_Geneva_Conventions

³³ «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» Ժնևյան 1-ին կոնվենցիա <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20878>

«Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության» մասին Ժնևի 4-րդ կոնվենցիայի³⁴ 130-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ *ներկալող իշխանությունները պետք է հետևեն այն բանին, որպեսզի վախճանված ներկալվածները թաղվեն պատվով, եթե հնարավոր է, այն կրոնի ծիսակատարությամբ, որին նա պատկանում է, որպեսզի նրանց գերեզմանները հարգվեն, պահվեն կարգին վիճակում, նշվեն այնպես, որ դրանք միշտ կարելի լինի գտնել:*

Ադրբեջանական կողմից հանձնված զոհվածների բոլոր 18 աճյունները ենթարկվել են ֆիզիկական խեղման և անարգանքի: Բացի այդ, Ադրբեջանի զինծառայողները սոցիալական կայքերում տեղադրել են տեսանյութեր, որոնցում նրանք պատկերված են գլխատված հայ զինվորի դիակի կողքին:

Քանի որ առկա են միայն վարկածներ առ այն, արդյո՞ք նման սահմուկեցուցիչ գործողությունները կատարվել են վերոնշյալ անձանց կենդանության օրոք գերևարելիս, թե արդեն վերջիններիս աճյունների հետ, հետևաբար, դրանով պայմանավորված, Ադրբեջանը իրականացրել է ոչ միայն «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» Ժնևի 1-ին, «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» 3-րդ, «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության» մասին 4-րդ հոդվածների դրույթների կոպտագույն խախտում, այլ նաև ծանր հանցագործություն՝ ցանկացած իրավական պետության քրեական օրենսդրության համաձայն³⁵:

2.6 Մարդկային վահանների օգտագործում

Լրացուցիչ Արձանագրություն 1-ի 51-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *քաղաքացիական բնակչության և քաղաքացիական առանձին անձանց ներկայությունը կամ տեղափոխությունը չպետք է օգտագործվեն ռազմական գործողություններից որոշակի կետերի կամ շրջանների պաշտպանության համար, մասնավորապես, փորձելու պաշտպանել ռազմական օբյեկտները հարձակումից կամ պաշտպանել ռազմական գործողությունները, դրանց նպաստել կամ խոչընդոտել: Ընդհարման մեջ գտնվող կողմերը չպետք է ուղղություն տան քաղաքացիական բնակչության կամ քաղաքացիական առանձին*

³⁴ «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության» մասին Ժնևի 4-րդ կոնվենցիա <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20872>

³⁵ Պաշտոնական տեսակետն այստեղ՝ <http://iravaban.net/123547.html>

անձանց տեղափոխմանը՝ նպատակ ունենալով փորձել ռազմական օբյեկտները պաշտպանել հարձակումից կամ պաշտպանել ռազմական գործողությունները:

Վերոնշյալ պարտավորությունների խախտումները՝ որպես պատերազմական հանցագործություններ, տրված են նաև Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի բ ենթակետով և 2002թ. «Հանցագործության տարրեր» ակտով³⁶:

Վերոնշյալ սկզբունքը համարվում է սովորութային նորմ երկրների պրակտիկայի կողմից: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի ուսումնասիրությունում³⁷ ևս ամրագրված է վերոնշյալ սկզբունքը՝ որպես Կանոն համար 97-ում: Սույն սկզբունքը ամրագրված է նաև այն երկրների օրենսդրություններում, որոնք և՛ չեն վավերացրել Ժնևյան կոնվենցիաների լրացուցիչ արձանագրությունները, և՛ կողմ չեն Միջազգային քրեական դատարանի կանոնադրությանը:³⁸

Վերոնշյալ Արձանագրություն 1-ի 58-րդ հոդվածի համաձայն՝ *ընդհարման մեջ գտնվող կողմերը գործնականորեն հնարավոր առավելագույն չափով.*

ա) կձգտեն, առանց չորրորդ կոնվենցիայի 49 հոդվածը վնասելու, իրենց վերահսկողության տակ գտնվող քաղաքացիական բնակչությանը, քաղաքացիական առանձին անձանց և քաղաքացիական օբյեկտները հեռացնել ռազմական օբյեկտների մերձակայքից,

բ) կխուսափեն խիտ բնակեցված շրջաններում կամ դրանց մերձակա վայրերում ռազմական օբյեկտներ տեղադրելուց,


գ) կձեռնարկեն նախազգուշական այլ անհրաժեշտ միջոցներ՝ իրենց վերահսկողության տակ գտնվող քաղաքացիական բնակչությանը, քաղաքացիական առանձին անձանց և քաղաքացիական օբյեկտները ռազմական գործողությունների հետևանքով առաջացող վտանգներից պաշտպանելու համար:

³⁶ Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, https://www.icc-cpi.int/nr/rdonlyres/ea9aeff7-5752-4f84-be94-0a655eb30e16/0/rome_statute_english.pdf

³⁷ Study on customary international humanitarian law conducted by the International Committee of the Red Cross (ICRC), Cambridge University Press, 2009, Volume II, Chapter 1, Section A.,:

³⁸ ee, e.g., the military manuals of France, Kenya, United Kingdom and United States and the legislation of Azerbaijan, Bangladesh, Belarus, Democratic Republic of the Congo, Georgia, Lithuania, Peru, Poland, Tajikistan and Yemen; see also the draft legislation of Burundi.

Ադրբեջանը դիտավորյալ իր ռազմական օբյեկտները տեղավորում է քաղաքացիական բնակավայրերին խիստ մոտ՝ այդպիսով քաղաքացիներին դարձնելով մարդկային վահաններ³⁹:



³⁹ <http://iravaban.net/125664.html>

3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

3.1 ՄԻԵԴ

ՄԻԵԴ-ը Ստրասբուրգում 1959թ.-ին հիմնված միջազգային դատարան է, որի դատավորների թիվը համապատասխանում է ՄԻԵԿ-ը վավերացրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների թվին: Դատարանը գործադրում է ՄԻԵԿ-ը:⁴⁰ Դրա խնդիրն է երաշխավորել կոնվենցիայում ամրագրված իրավունքների և երաշխիքների նկատմամբ հարգանքը անդամ պետությունների կողմից, ինչը Դատարանն իրականացնում է անհատների, երբեմն նաև պետությունների ներկայացրած բողոքների քննության միջոցով: Եթե այն գտնում է, որ անդամ պետությունը ոտնահարել է վերոնշյալ իրավունքներից և երաշխիքներից մեկը կամ ավելին, ապա որոշում է կայացնում: Որոշումները պարտադիր իրավական ուժ ունեն: Որոշման կողմ հանդիսացող պետությունները պարտավոր են ենթարկվել դրանց:⁴¹

ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի համաձայն՝ *բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում*⁴²: Հարց է առաջանում, արդյո՞ք երկրի իրավագործությունը տարածվում է պետության տարածքից դուրս իրականացված գործողությունների համար և, եթե այո, ապա արդյո՞ք այն տարածվում է Ադրբեջանի կողմից իրականացված Գործողությունների համար: Այս հարցին պետք է պատասխանել ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների լույսի ներքո:

Այսպես, *Loizidou-ն ընդդեմ Թուրքիայի*⁴³ գործում ՄԻԵԴ-ը նշել է, որ *թեև ՄԻԵԿ-ի առաջին հոդվածը նախատեսում է Կոնվենցիայի կիրառման սահմաններ, սակայն «իրավագործությունը» սահմանափակված չէ ազգային տարածքով: Մասնավորապես, պետության պատասխանատվությունը կարող է առաջանալ այն դեպքում, երբ ռազմական*

⁴⁰ ԿՈՆՎԵՆՏԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[1] (1950 թ. նոյեմբերի 4) Կից արձանագրություններով <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870>

⁴¹ <http://www.echr.coe.int>

⁴² <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870>

⁴³ *Loizidou v. Turkey* (Judgment), App. No. 15318/89, 310 Eur. Ct. H.R. (ser. A), § 62 (1995)

գործողությունների հետևանքում, անկախ վերջիններիս օրինականությունից, այն իրականացնում է արդյունավետ վերահսկողություն ազգային տարածքից դուրս կոնկրետ շրջանի նկատմամբ: Եղանակներից մեկը ռազմական ուժերի միջոցով վերահսկողության իրականացումն է:

Ռազմական ուժերի միջոցով պետության կողմից վերահսկողության իրականացում և ՄԻԵԿ-ի կիրառելիություն ՄԻԵԴ-ը գտել է *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի*⁴⁴, *Ilascu-ն և այլոք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի*⁴⁵ և *Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի*⁴⁶ և այլ գործերում

Հետևաբար, ՄԻԵԴ դիմելիս անհրաժեշտ է հասկանալ, արդյո՞ք այդ տարածքները գտնվել են Ադրբեջանի, թե ԼՂՀ-ի վերահսկողության տակ:

Այդ նպատակով անհրաժեշտ է տարբերակել այն տարածքներում ադրբեջանցիների կողմից սպանված և վիրավորված անձանց միջև, որոնք գտնվել են ԼՂՀ ուժերի վերահսկողության շրջաններում և Թալիշում սպանվածների և վիրավորվածների միջև, որը, թեև կարճ ժամանակահատվածով, սակայն գտնվել է ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո:

Ելնելով վերը թվարկված ՄԻԵԴ նախադեպային որոշումների տրամաբանությունից, կարող ենք փաստել, որ ՄԻԵԿ-ը կիրառելի չէ ԼՂՀ ուժերի վերահսկողության շրջաններում գտնվող գոհերի և վիրավորների նկատմամբ: ՄԻԵԿ-ը տվյալ տարածքների նկատմամբ կիրառելի կլինե՞ր միայն այն դեպքում, եթե վերջիններս անցած լինեին Ադրբեջանի վերահսկողության տակ: Սակայն, ՄԻԵԿ-ը կիրառելի է Թալիշում սպանված և վիրավորված քաղաքացիական անձանց նկատմամբ:

Սակայն, հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ի բոլոր նախադեպային որոշումները չեն հետևում նույն՝ վերը շարադրված տրամաբանությանը: Մասնավորապես, ավելի վաղ կայացված *Բանկովիչը և այլոք ընդդեմ Բելգիայի*⁴⁷ գործով ՄԻԵԴ-ը հաստատել է, որ բացակայել է ոմբակոծողների արդյունավետ վերահսկողությունը, հետևաբար՝ իրավագործությունը ոմբակոծված տարածքների նկատմամբ, ուստի ՄԻԵԿ-ը չի կիրառվում:

⁴⁴ *Cyprus v Turkey*, Application no. 25781/94, GC Judgement of 10 May 2001, Para 177.

⁴⁵ *Ilascu and others v Moldova and Russia Judgement*, Application no. 48787/99, GC Judgement of 8 July 2004.

⁴⁶ *Chiragov and Others v. Armenia*, 16 June 2015 (Grand Chamber – judgment on the merits)

⁴⁷ *Decision as to the admissibility of Application no. 52207/99 of 12 December 2001 (Grand Chamber) in the case Bankovic and Others v. Belgium and 16 Other Contracting States.*

ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով*: Միննույն կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ *ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի*:

ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք*: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

ՄԻԵԿ-ի 32-րդ հոդվածի համաձայն՝ *դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33-րդ, 34-րդ և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում*:

ՄԻԵԿ-ի 33-րդ հոդվածի համաձայն՝ *ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմ*:

ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն՝ *դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ*: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

Հետևաբար Թայիշում սպանված և վիրավորված քաղաքացիական անձանց կյանքի, սեփականության իրավունքների և խոշտանգումների արգելքի խախտման համար իրավական պաշտպանության նպատակով հնարավոր է դիմել ՄԻԵԴ:

Այս գործերով ՄԻԵԴ դիմելու պրակտիկ հնարավորություն ունեն ինչպես զոհերի իրավահաջորդները՝ ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն, այնպես էլ ՀՀ-ն՝ ՄԻԵԿ-ի 33-րդ հոդվածի համաձայն՝ ի դեմս ՀՀ գլխավոր դատախազության:

ՄԻԵԿ-ի 35-րդ հոդվածի համաձայն՝ *ՄԻԵԴ-ը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին*

համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

Այնուհանդերձ, «միջոցները, որ պահանջվում է սպառել հոդված 35-ի կետ 1-ով, վերաբերում են հենց ենթադրյալ խախտումներին, հասանելի են ու բավարար»⁴⁸: «Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմեր»-ի համաձայն, գոյություն ունեն հատուկ հանգամանքներ, որոնց դեպքում դիմումատուն ազատվում է ներպետական իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու պարտականությունից⁴⁹: Կանոնը կիրառելի չէ նաև այն դեպքում, երբ առկա է այնպիսի ադմինիստրատիվ պրակտիկա, որի ժամանակ Կոնվենցիայի հետ անհամատեղելի գործողությունները կրում են շարունակական բնույթ և պետական մարմինների կողմից նկատվում է հանդուրժողականություն: Այս պարագայում միջոցը դառնում է ապարդյուն կամ անարդյունավետ⁵⁰:

Հաշվի առնելով վերոնշյալ վերաբերմունքը Ադրբեջանի կողմից հայկական էթնիկ ծագում ունեցող անձանց նկատմամբ, ակներև է, որ Ադրբեջանական ներպետական միջոցների սպառումը անարդյունավետ է, ուստի այս կապակցությամբ խնդիրներ հավանաբար չեն առաջանա:

3.2 Միջազգային քրեական դատարան

Միջազգային քրեական դատարանը Հաագայում, հիմնադրվել է 1998թ.-ի հուլիսի 17-ին ՄԱԿ-ի լիազոր ներկայացուցիչների Հռոմի կոնֆերանսում ընդունված Հռոմի ստատուտի համաձայն: Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի և Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալի փորձը միջազգային հասարակությանը ցույց տվեց անկախ և հիմնական դատարան ստեղծելու անհրաժեշտությունը: Քրեական արդարադատության առաջին միջազգային մարմինն է, որի նպատակն էր ցեղասպանությունների, ռազմական հանցագործությունների,

⁴⁸ Տե՛ս, օրինակ՝ *Մակ Ֆարլեյնը ընդդեմ Բոլանդիայի*, դիմ. թիվ 31333/06, Մեծ պալատի 2010թ. սեպտեմբերի 10-ի վճիռը, § 107:

⁴⁹ *Sejdovic v. Italy* [Մեծ Պալատ], § 55

⁵⁰ *Aksoy v. Turkey*, 18 December 1996, Reports 1996-V, § 52

մարդկության դեմ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց հետապնդումը: Պաշտոնապես իր գործունեությունը սկսել է 2002թ.-ի հուլիսի 1-ից:⁵¹

Պատերազմական հանցագործությունների, ինչպես նաև ագրեսիայի՝ որպես միջազգային հանցագործություններ արգելքը սահմանված է Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 5-րդ հոդվածով:

Ագրեսիայի հանցակազմը Հռոմի ստատուտի սկզբնական տարբերակում նախատեսված չէր: Ստատուտի 5-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում էր, որ *դատարանն ագրեսիայի հանցագործության նկատմամբ իր իրավագործությունը կիրականացնի, երբ 121 և 123 հոդվածներին համապատասխան կրնդունվի այդ հանցագործությունը սահմանող և այն պայմաններն ամրագրող դրույթը, որոնց դեպքում դատարանն իրականացնում է իր իրավագործությունը այդ հանցագործության նկատմամբ*: Նախատեսվում էր նաև, որ նշված դրույթը պետք է համատեղելի լինի ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան դրույթների հետ:

2010թ. հունիսին Ուզանդայի մայրաքաղաք Կամպալայում կայացած Վերանայման կոնֆերանսում ընդունվեցին ստատուտի համապատասխան փոփոխությունները, որոնցով սահմանվեցին ագրեսիայի հանցակազմը, պատասխանատվության սուբյեկտը, ինչպես նաև դատարանի կողմից ագրեսիայի հանցագործության նկատմամբ իրավագործության իրականացման եղանակները⁵²: Հետևաբար, Միջազգային քրեական դատարանը ագրեսիայի ակտերի նկատմամբ ունի առարկայական ընդդատություն:

Սակայն, Հռոմի ստատուտի 15-րդ հոդվածը նաև սահմանում է, որ ագրեսիայի հանցագործության նկատմամբ դատարանը կարող է իր իրավագործությունը իրականացնել միայն 30 անդամ-պետությունների կողմից նշված փոփոխությունների վավերացնելուց հետո մեկ տարի անց և ոչ շուտ, քան 2017թ.-ի հունվարի մեկը պետությունների երկու երրորդի որոշմամբ:

Հարց է առաջանում, արդյո՞ք, ըստ միջազգային իրավունքի, ագրեսիա են որակվում Ադրբեջանի ռազմական գործողությունները ինքնորոշված ԼՂՀ-ի դեմ, եթե ԼՂՀ-ն միջազգայնորեն ճանաչված չէ: Ագրեսիայի սահմանումը հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր

⁵¹ <http://www.icc-cpi.int/>

⁵² <http://www.jurist.org/paperchase/2010/06/icc-nations-adopt-crime-of-aggression.php>

ասամբլեայի 1974թ.-ի բանաձևով⁵³, որին հղում է տրվում նաև Հռոմի ստատուտի 8 bis հոդվածում: Բանաձևի նախաբանում վերահաստատվում է պետությունների պարտավորությունը զինված ուժ չկիրառելու ժողովուրդներին ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկախությունից զրկելու նպատակով: Հոդված 1-ում տրված սահմանման համաձայն՝ ագրեսիա է համարվում պետության կողմից զինված ուժի կիրառումը ընդդեմ այլ պետության սուվերենության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության: Համաձայն նույն հոդվածի՝ «պետություն» տերմինը օգտագործվում է՝ չկանխորոշելով ճանաչման հարցը կամ տվյալ պետության՝ ՄԱԿ-ի անդամ հանդիսանալու հարցը: Այդ սահմանումից միանշանակ բխում է, որ միջազգայնորեն չճանաչված և ՄԱԿ-ի անդամ չհանդիսացող պետության դեմ ռազմական գործողությունների իրականացումը ևս հանդիսանում է ագրեսիա:

Խնդիրը կայանում է նրանում, որ ո՛չ Ադրբեջանը, ո՛չ ԼՂ-ն, ոչ էլ Հայաստանը Միջազգային քրեական դատարանի Կանոնադրության անդամ չեն հանդիսանում: Ադրբեջանը ոչ միայն չի վավերացրել, այլև՝ չի ստորագրել Հռոմի Ստատուտը: Չնայած ՀՀ-ն Հռոմի ստատուտը ստորագրել է 1999թ.-ի հոկտեմբերին, սակայն այն դեռևս չի վավերացվել:

2004թ. օգոստոսի 13-ին ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՌ-502 որոշմամբ 1998 թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները (Կանոնադրության նախաբանի 10-րդ մաս և 1-ին հոդված), ճանաչվել է ՀՀ սահմանադրության 91-րդ և 92-րդ հոդվածներին չհամապատասխանող:

Նույն որոշմամբ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 105-րդ հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, նույնպես ճանաչվել են ՀՀ Սահմանադրության

⁵³ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1974թ.-ի 3314(XXIX) բանաձև, http://crimeofaggression.info/documents/6/1974_GA_RES_3314.pdf

40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17-րդ կետի, 81-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող:⁵⁴

Հարկ է նշել, որ Ֆրանսիան ևս բախվել էր վերոնշյալ խնդրի հետ և խնդիրը լուծել էր՝ Միջազգային քրեական դատարանի իրավասությունը բացառիկ դեպք ճանաչելով:

Սակայն, դա չի նշանակում, որ Միջազգային քրեական դատարանը Ադրբեջանի կողմից կատարված հանցագործությունները քննելու նկատմամբ չունի իրավասություն: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կարող է միջնորդող բանաձևի միջոցով Դատարանին փոխանցել ինչ որ հանցագործության իրավիճակ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 15-րդ հոդվածի համաձայն:

Նման դեպքի նախադեպ է համարվում Դարֆուրի գործը, երբ ՄԱԿ-ի ԱԽ-ն, օգտվելով իր իրավունքից, գործը փոխանցեց ՄՔԴ-ին, իսկ վերջինս, հետաքննություն իրականացնելով, երկրում կատարվածը որակեց որպես ցեղասպանություն և դատավճիռ կայացրեց⁵⁵:

Սակայն, Հռոմի ստատուտի 15 bis հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *ինչ վերաբերվում է Պետությանը, ով կողմ չի հանդիսանում Ստատուտին, Դատարանը չունի իրավասություն ագրեսիայի հանցագործության նկատմամբ, երբ իրականացվում է Պետության քաղաքացիների կողմից կամ Պետության տարածքում:*

Վերոնշյալից բխում է, որ 2 պատճառներով պայմանավորված, Ադրբեջանի կողմից կատարված արարքները ագրեսիա որակելու դեպքում Միջազգային քրեական դատարանը իրավասություն չի ունենա: Նախ, Հռոմի ստատուտի 15 bis հոդվածի 5-րդ մասով պայմանավորված, քանի որ Ադրբեջանը, ինչպես վերը նշվեց, Հռոմի ստատուտը կողմ պետություն չի հանդիսանում: Երկրորդը, առհասարակ, առնվազն մինչև 2017թ. հունվարի 1-ը Միջազգային քրեական դատարանը չի քննելու ագրեսիային վերաբերվող գործեր:

Այնուամենայնիվ, Միջազգային քրեական դատարանը կկարողանա Ադրբեջանին պատասխանատվության ենթարկել Հռոմի կանոնադրության 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 15-րդ հոդվածներով նախատեսված կարգով Անվտանգության խորհրդի միջնորդող բանաձևի միջոցով, եթե Ադրբեջանի կողմից կատարված հանցագործությունները որակվեն

⁵⁴ 2004թ. օգոստոսի 13-ին ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-502 որոշում, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4820>

⁵⁵ https://en.wikipedia.org/wiki/United_Nations_Security_Council_Resolution_1593

որպես պատերազմական հանցագործություններ, որոնք սահմանված են վերոնշյալ ստատուտի 8-րդ հոդվածի համաձայն: Այսպես, վերոնշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատարանին ընդդատյա են պատերազմական հանցագործությունները, մասնավորապես երբ իրականացվել են որպես նման հանցագործությունների իրականացման նախագծի կամ քաղաքականության մի մաս կամ որպես լայնածավալ իրականացման մի մաս, իսկ 2-րդ մասում թվարկվում են պատերազմական հանցագործությունները, որի հիմնական մասը Ժնևյան կոնվենցիաների կոպիտ խախտումներն են, որոնց անդրադարձել ենք:*

Ադրբեջանի կողմից սանձազերծած վերը նշված լայնածավալ վայրագություններին տրվեց նոր տերմին՝ «քառօրյա պատերազմ»: Կարծում ենք, որ կասկածից վեր է, որ վերոնշյալ հանցագործությունները իրականացվել են և լայնածավալորեն, և՛ որպես նախապես մշակված նախագիծ մի մաս: Մասնավորապես, ԼՂՀ գլխավոր դատախազի որոշմամբ հարուցվել է քրեական գործ ԼՂՀ քրեական օրենսգրքի 410-րդ (Ագրեսիվ պատերազմ) և 416-րդ (Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ) հոդվածների հատկանիշներով⁵⁶: Այսինքն, միակ հնարավոր տարբերակը, դա այն է, երբ վերոնշյալ դատարանը պատասխանատվության կենթարկվի Ադրբեջանին պատերազմական հանցագործությունների համար Անվտանգության խորհրդի միջնորդող բանաձևի միջոցով:

Կանոնադրության 71-րդ հոդվածի համաձայն՝ դրանում նախատեսված *հանցագործությունների համար մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ կարող են նշանակվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժամիջոցներ: Որպես հիմնական պատժամիջոց կարող է նշանակվել ազատազրկում՝ 30 տարին չգերազանցող ժամկետով, կամ ցմահ ազատազրկում:*

Սակայն, հարկ է նշել, որ Կանոնադրությունը 25-րդ հոդվածում ամրագրում է նաև Դատարանի գործունեության հիմքում ընկած՝ քրեական իրավունքի այնպիսի սկզբունք, ինչպիսին է անհատական պատասխանատվության սկզբունքը: Սա կարող է դժվարություններ առաջացնել որոշելիս, թե հանցագործությունները կոնկրետ որ անձի կողմից են կատարվել:

⁵⁶ <http://www.tert.am/am/news/2016/04/04/moisian/1983157>

3.3 Արդարադատության միջազգային դատարան

Արդարադատության միջազգային դատարանը ՄԱԿ-ի հիմնական դատական մարմինն է: Այն հիմնադրվել է 1945 թվականի հունիսին ՄԱԿ-ի Կանոնադրությամբ և սկսել է գործել 1946 թվականի ապրիլին: Միջազգային դատարանը ստեղծված է միջազգային հակասությունները խաղաղ ճանապարհով լուծելու ռազմավարության առանցքային բաղադրիչը դառնալու և կարգուկանոնի և օրինականության ապահովման համար⁵⁷:

Արդարադատության միջազգային դատարանի Կանոնադրության 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *դատարանի վարույթին վերաբերում են բոլոր այն գործերը, որոնք նրան փոխանցում են կողմերը, և այն բոլոր հարցերը, որոնք հատուկ նախատեսված են Միավոր ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ կամ գործող պայմանագրերով ու կոնվենցիաներով: Սույն Կանոնադրության մասնակից պետությունները կարող են ցանկացած ժամանակ հայտարարել, որ իրենք առանց հատուկ համաձայնության, ipso facto, ճանաչում են նման պարտավորություն ընդունած ցանկացած այլ պետության նկատմամբ Դատարանի իրավագործությունը բոլոր իրավական հարցերով, որոնք վերաբերում են. ա) պայմանագրի մեկնաբանմանը, բ) միջազգային իրավունքի ցանկացած հարցի, գ) փաստի առկայությանը, որը, եթե հաստատվի, իրենից կներկայացնի միջազգային պարտավորության խախտում, դ) միջազգային պարտավորության խախտման համար փոխհատուցման բնույթին և չափերին:*

Սակայն, ո՛չ ԼՂՀ-ն, ո՛չ ԱՀ-ն, ո՛չ ՀՀ-ն չեն անդամակցում վերոնշյալ Կանոնադրությանը⁵⁸:

Նկատի ունենալով, որ խոշտանգման ենթարկված քաղաքացիները հանդիսացել են ԼՂՀ քաղաքացիներ, իսկ զինծառայողները՝ ԼՂՀ ՊԲ զինծառայողներ, հարց է առաջանում, թե ինչպես են այլ երկրներ հիմնավորելու, որ իրավասու է ներկայացնել նշված սուբյեկտների շահերը վերոնշյալ դատարանում:

Հարկ է նշել, որ վերը թվարկված միջազգային հանցագործությունները և հատկապես ուժի կիրառման արգելքի սկզբունքի խախտումը ունեն *jus cogens* բնույթ⁵⁹,

⁵⁷ <http://www.icj-cij.org>

⁵⁸ Արդարադատության միջազգային դատարանի <http://www.un.org/ua/2002Statute%20of%20ICJ.pdf>

դատարանի

Կանոնադրություն

այսինքն, նույնիսկ եթե պետությունը չի ստորագրել կոնվենցիան, ապա միևնույն է պարտավոր է կատարել նրա պահանջները, ուստի առաջացնում են այլ պետությունների իրավունքը և պարտավորությունը ամբողջ հանրության առջև (*erga omnes*)՝ բարձրացնել իրավախախտ անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության հարցը՝ ունիվերսալ իրավունքով: Վերոնշյալ պարտավորությունները ներառում են խտրականության արգելքը և սահմանված են Արդարադատության միջազգային դատարանի կողմից *Բելգիան ընդդեմ Իսպանիայի* գործում⁶⁰: Այս մասով խնդիրը կարելի է լուծված համարել:

Ինչ վերաբերվում է «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» դաշնագրին, ապա կրկին բախվում ենք դաշնագրի կիրառելիության խնդրին: Վերոնշյալ դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց այն իրավունքները, որոնք ճանաչվել են սույն դաշնագրում*:

Արդարադատության միջազգային դատարանը *Wall Advisery* Խորհրդատվական Կարծիքում⁶¹ և *Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունն ընդդեմ Ուգանդայի*⁶² գործում հաստատել է, որ վերոնշյալ դաշնագիրը արտատարածքային կիրառելիություն ունի օկուպացիոն իրավիճակներում, երբ պահպանվում է արդյունավետ վերահսկողության տարրը: Այսպիսով, վերոնշյալ դաշնագիրը, ՄԻԵԿ-ի հետ մեկտեղ, կիրառվում է Թալիշում և այլ վայրերում, որոնք թեն կարճ ժամանակահատվածով, սակայն գտնվել են ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո, սպանված և վիրավորված քաղաքացիական անձանց նկատմամբ:

Սակայն, եթե նույնիսկ այլ երկրներ դիմեն վերոնշյալ դատարան, միևնույնն է, մյուս կողմը հանդիսացող երկիրը, մեր դեպքում՝ Ադրբեջանը, պետք է ընդունի, որ պատասխանող կողմն է, ինչը քիչ հավանական է:

⁵⁹ Article 53 of the Vienna Convention on the Law of Treaties, U.N. Doc. A/CONF.39/27 (1969), repinted in 63 Am. J. Int'l L. 875 (1969).

⁶⁰ *Belgium v Spain* (Second Phase) ICJ Rep 1970 3, para 33:

⁶¹ *Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory*, ICJ Advisory Opinion, 9 July 2004 (A/ES-10/273 and Corr.1), §§ 107-111

⁶² *Case concerning Armed Activities on the Territory of the Congo (DRC v. Uganda)*, ICJ judgment, 2005, §§ 216 – 217.

3.4 Միավորված ազգերի Ad-hoc քրեական և հիբրիդային դատարաններ Ad-hoc քրեական դատարաններ

Մինչև Հաագայի դատարանի ստեղծումը, Ցեղասպանությունների և քաղաքացիական պատերազմների ընթացքում կատարված հանցագործությունների հետաքննության համար, ի լրումն միջազգային տրիբունալների, ստեղծվում են նաև *իրավիճակային դատարաններ՝ ad hoc*, հաշվի առնելով միջազգային և ներպետական ռազմավարությունները: Իրավական ուժ ունի միայն պայմանավորվող կողմերի միջև: *Ad hoc* քրեական դատարանների օրինակներ են.

- նախկին Հարավսլավիայի Միջազգային քրեական տրիբունալ (ICTY) Հաագայում, որը հիմնադրվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 827 բանաձևի համաձայն 1993թ. մայիսի 25-ին,
- Ռուանդայի (Տանզանիա) Միջազգային քրեական տրիբունալը (ICTR), որը հիմնադրվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 955 բանաձևի համաձայն 1994 թ. նոյեմբերի 8-ին,
- Միջազգային մնացորդային մեխանիզմ *ad hoc* քրեական տրիբունալների համար (MICT) ըստ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1966 թ. սահմանված բանաձևի, որի գործունեությունը կդադարեցվի՝ միայն նրա իրավասության մեջ մտնող գործերի վերջին որոշումը ընդունելով:

Հիբրիդային դատարաններ

Երրորդ սերնդի միջազգային քրեական դատական մարմինները այսպես կոչված խառը միջազգային, կիսա-միջազգային կամ հիբրիդային տրիբունալներն են: Նրանք ունեն ազգային և միջազգային իրավունքի իրավական հիմք և բաղկացած են ազգային և միջազգային դատավորներից: Վերջիններս հիմնականում (բայց ոչ միշտ) նշանակվում են ՄԱԿ-ի կողմից: Այդ հիբրիդային դատարանները հիմնականում ազգային դատական համակարգի մասն են կազմում: Կրողը միայն տվյալ պետությունն է: Գրեթե բոլոր խառը տրիբունալների ֆինանսավորումը իրականացվում է անդամ-պետությունների կամավոր ներդրումների հաշվին (բացառությամբ նախկինում գործող Թիմոր-Լեշտիի ծանր հանցագործությունների հատուկ պալատների):

Այդպիսի «հիբրիդային դատարանների» օրինակներ են Դիլիի (Արևելյան Թիմոր) (2000), Կոսովոյի (2000), Սիերա Լեոնեի (2002), Սարաևոյի (Բոսնիա և Հերցեգովինա) դատական պալատը ռազմական հանցագործությունների հետաքննության համար (2005), Լիբանանի (2007), Արևելյան Թիմորի և Կամբոջայի (2006) դեպքերի կապակցությամբ ստեղծված միջազգային դատարանները, Իրաքի (Բաղդադ) Գերագույն քրեական տրիբունալը և այլն:

Այս դատական մարմիններից յուրաքանչյուրի գործունեությունը տարբերվում է իր բնույթով, բայց բոլորը իրագործվում են ՄԱԿ-ի նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի համաձայն:⁶³

ՄԱԿ-ի կողմից հնարավոր է նաև նման մասնագիտացված տրիբունալի ստեղծումը, որը միտված կլինի ենթարկել Ադրբեջանին քրեական պատասխանատվության:

⁶³https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%AB%D5%BB%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որպեսզի վերջինս Հռոմի կանոնադրության 13-րդ հոդվածի 2-րդ մասով և 15-րդ հոդվածով նախատեսված կարգով իր միջնորդող բանաձևի միջոցով դիմի Միջազգային քրեական դատարանին՝ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկել իր կողմից կատարված՝ վերոնշյալ ստատուտի 8-րդ հոդվածով սահմանված պատերազմական հանցագործությունների համար:
- Դիմել ՄԻԵԴ Թալիշում և այլ վայրերում, որոնք թեև կարճ ժամանակահատվածով, սակայն գտնվել են ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո, սպանված և վիրավորված քաղաքացիական անձանց ՄԻԵԿ-ի և ՄԻԵԿ-ի 1-ին Արձանագրության համապատասխանաբար 2-րդ, 3-րդ և 1-ին հոդվածներով սահմանված կյանքի, սեփականության իրավունքների և խոշտանգումների արգելքի խախտման համար իրավական պաշտպանության նպատակով: Այս գործերով ՄԻԵԴ դիմելու պրակտիկ հնարավորություն ունեն ինչպես զոհերի իրավահաջորդները, վիրավորները, սեփականություն կորցրած անձինք՝ ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի համաձայն, այնպես էլ ՀՀ-ն՝ ՄԻԵԿ-ի 33-րդ հոդվածի համաձայն՝ ի դեմս ՀՀ գլխավոր դատախազության:
- Դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ Ադրբեջանի կողմից իրականացված հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու մասնագիտացված դատարանի ստեղծման նպատակով:
- Ֆրանսիայի նախադեպին հետևելով՝ Սահմանադրության մեջ առանձին հոդված ավելացնել և Քրեական դատարանի կանոնադրության ընդունումը բացառիկ դեպք ճանաչել: Ի դեպ՝ Միջազգային քրեական դատարանի քարտուղարի կարծիքով ևս՝ եթե պետությունը ցանկություն ունի, ապա խոչընդոտները հաղթահարելի են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Միջազգային կոնվենցիաներ

1. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված՝ 1948թ. դեկտեմբերի 10-ին,
2. ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, ընդունված՝ 1966թ. դեկտեմբերի 16-ին,
3. ՄԱԿ-ի «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, ընդունված՝ 1965թ. դեկտեմբերի 21-ին,
4. ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտ, ընդունված 1975թ. օգոստոսի 1-ին,
5. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, ընդունված՝ 1950թ. նոյեմբերի 4-ին,
6. Ժնևի «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» 1-ին կոնվենցիա, ընդունված՝ 1949 թ. օգոստոսի 12-ին,
7. Ժնևի «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 3-րդ կոնվենցիա, ընդունված՝ 1949 թ. օգոստոսի 12-ին,
8. Ժնևի «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության» մասին 4-րդ կոնվենցիա, ընդունված՝ 1949 թ. օգոստոսի 12-ին,
9. «Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին» Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի Կոնվենցիաներին կից Ժնևի կոնվենցիայի 1-ին Լրացուցիչ Արձանագրություն, ընդունված՝ 1977թ.-ի օգոստոսի 12-ին,
10. Հաագայի «Ցամաքում պատերազմի օրենքների ու սովորույթների մասին» միջազգային 2-րդ կոնվենցիա, ընդունված՝ 1899թ.-ի հուլիսի 29-ին,
11. ՄԱԿ-ի «Երեխաներին իրավունքների մասին» կոնվենցիա, ընդունված՝ 1989թ. նոյեմբերի 20-ին,
12. Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիա, ընդունված՝ 1969 թ. մայիսի 23-ին:

Միջազգային կառույցների փաստաթղթեր

13. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 3314 (XXIX) բանաձև, ընդունված 1974թ.-ին,
14. ՄԱԿ-ի Կանոնադրություն (Գլխավոր ասամբլեայի 46/227 բանաձև), ուժի մեջ է մտել 1992թ. մարտ 2-ից,
15. Արդարադատության միջազգային դատարանի Կանոնադրություն, ընդունված՝ 1945թ. հունիսին,
16. Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, ընդունված՝ 1988թ. հուլիսի 17-ին,
17. Կոմիտեի վերջնական որոշումը Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, Ադրբեջան, ընդունված 2005 թ. ապրիլի 14-ին,
18. Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ կոմիտեի որոշումը, ընդունված՝ 2002 թ. հունիսի 28-ին:

Ներպետական իրավական ակտեր

19. ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-502 որոշում, ընդունված՝ 2004թ. օգոստոսի 13-ին

Դատական նախադեպեր

20. *Decision as to the admissibility of Application no. 52207/99 of 12 December 2001 (Grand Chamber) in the case Bankovic and Others v. Belgium and 16 Other Contracting State,*
21. *Loizidou v. Turkey* (Judgment), App. No. 15318/89, 310 Eur. Ct. H.R. (ser. A), § 62 (1995),
22. *Öcalan v. Turkey*, Application no. 46221/99, GC Judgement of 12 May 2005 (Grand Chamber – judgment),
23. *Ilascu and others v Moldova and Russia Judgement*, Application no. 48787/99, GC Judgement of 8 July 2004,
24. *Chiragov and Others v. Armenia*, 16 June 2015 (Grand Chamber – judgment on the merits),
25. *Cyprus v. Turkey* (1976), 4 E.H.R.R. 482,
26. *Մակ Ֆարլեյնը ընդդեմ Իռլանդիայի*, դիմ. թիվ 31333/06, Մեծ պալատի 2010թ. սեպտեմբերի 10-ի վճիռը,
27. *Sejdovic v. Italy* [Մեծ Պալատ],
28. *Aksoy v. Turkey*, 18 December 1996, Reports 1996-V,

29. *Case Concerning Armed Activities on the Territory of the Congo* (DRC v. Uganda), ICJ, judgment, 2005,
30. *Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory*, ICJ Advisory Opinion, of 9 July 2004 (A/ES-10/273 and Corr.1),
31. *Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo* (*Request for Advisory Opinion*), ICJ, 22 July 2010,
32. *Barcelona Traction Case, Belgium v Spain* (Second Phase), ICJ Rep 1970

Աշխատություններ

33. Study on customary international humanitarian law conducted by the International Committee of the Red Cross (ICRC), Cambridge University Press, 2009, Volume II, Chapter 1, Section A.,:
34. Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Շավարշ Քոչարյան, 2013թ.

Ինտերնետային աղբյուրներ

35. <http://iravaban.net/122823.html#ad-image-5>
36. <http://karabakhfacts.com/tag/ramil-safarov-case/>
37. https://en.wikipedia.org/wiki/List_of_parties_to_the_Geneva_Conventions
38. https://en.wikipedia.org/wiki/List_of_parties_to_the_Hague_Conventions_of_1899_and_1907